ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ «ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՎԵՊԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1990-ականներին «Գրական թերթում» ծավալվեց ժամանակակից վեպի շուրջ մի բանավեճ, ուր մասնավորապես քննարկվում էր խնդիրը, թե ինչու են իրապես լավ, իրապես ժամանակակից վեպերը մեզանում սակավ, խոսվում էր իննսունականներին տպագրված մի քանի վեպերի մասին՝ Նորայր Ադալյանի «Դավայաթաղ», Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին», Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց», Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ Ներքինին», Զորայր Խալափյանի «Վասիլ Մեծ կամ Կծուձների թագավորը» և Պերճ Զեյթունցյանի «Վերջին ձյունը»: Հիշենք, որ վերջին երեք գործերը պատմական վեպեր են, իսկ պատմավեպը, որքան էլ գրված լինի շքեղ ու գեղեցիկ ոճով, որքան էլ ժամանակաշրջանի հետ սերտ աղերսներ և խոսուն զուգահեռներ, որքան էլ գեղարվեստական անուրանալի արժանիքներ ունենա, ոչ մի դեպքում չի կարող փոխարինել իսկական ժամանակակից վեպին: Իրադարձություններով աղքատ իրականությունը հաճախ է հայ գրողին ստիպել հայացքը դարձնել դեպի պատմական անցյալ: Պատմությունը պատրաստի փաստական նյութ է տրամադրում, իսկ գրողին, կարծես թե, մնում է մշակել սեփական ոճը, անցյալի և ներկայի սեփական հայեցակարգն ու երևակայությունը՝ լցնելու համար պատմական անցյալի դատարկ անոթը: Քիչ գրողների է հաջողվել ամբողջացնել իր ժամանակի իրականությունը:

Հայ գրականության լավագույն վեպերը պարտական են պատմական իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանների: Հայ իրականության և գրականության համար անցած դարի 90-ականները շրջադարձային էին, և կարծես թե, անկախության շրջանի գրական ձեռքբերումներն ամփոփելու ժամանակն է: Գրական ոչ մի ժանր, թերևս, այնքան կապված չէ իր ժամանակաշրջանի հետ, գրական որևէ ժանրի գեղարվեստական տարածք այնքան ընդգրկուն ու մանավանդ այնքան բաց չէ իր ժամանակաշրջանի համար, որքան վեպի տարածքը, դա է պատճառը, որ մեզ համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հենց վեպի ժանրը: Որո՞նք են անկախության ժամանակաշրջանի լավագույն վեպերը, կա՞ն արդյոք այնպիսիք,

որոնք ժամանակաշրջանն ու իրականությունը պատկերելուց բացի գեղարվեստական այլ ընդհանրացումների են հասել: Լավ վեպերն անկախության շրջանի առաջին երկու տասնամյակներում սակավ են: Այսպես թե այնպես ընտրությունը «Գրական թերթի» վերը հիշատակված բանավեճում քննարկվող սակավաթիվ վեպերից է լինելու: Մենք կփորձենք ճշգրտել Գ. Խանջյանի «Հիվանդանոց» վեպի նշանակությունն անկախության շրջանի հայ գրական պրոցեսում, թվել այն փաստարկները, որոնք այդ վեպի հանգրվանային բնույթի օգտին են վկայում, իսկ Գ. Խանջյանի «Հիվանդանոցը», մեր համոզմամբ, անկախության շրջանի սակավ լավագույն վեպերից մեկն է, որի անառարկելի արժանիքներից մեկը ժամանակաշրջանի հետ իրականության անուղղագիծ և, կարելի է ասել, բազմանշանակ կապն է, ընդ որում այս վեպն իր ժամանակաշրջանի, իրականության բազմաթիվ երևույթների, իրողությունների պատկերային բարդ ամբողջության՝ մետաֆորի է վերածում. այդ փոխաբերությունը հիվանդանոցն է, այն, ինչ պակասում էր անկախության շրջանի մյուս լավագույն, օրինակ, «Դավայաթաղ» վեպին, որն ինչքան էլ հաջողված վեպ է, բայց մետաֆոր չունի: Իսկ արդյո՞ք շատ են հայ գրականության մեջ մետաֆոր ստեղծած վեպերը: Մեր կարծիքով, վեպում մետաֆորը գրողի անհատականության և ինքնատիպության ամենաբարձր ցուցիչն է: Համաշխարհային գրականության լավագույն վեպերը մեծ մետաֆորների վրա են խարսխված, և որքան բարդ ու բազմանշանակ են այդ մետաֆորները, այնքան ավելի կայուն է վեպը: Իրականում արժեքավոր են այն մետաֆորները, որոնք կարելի է մեկնաբանել որպես և՛ ժամանակաշրջանի, և՛ կացութաձևի, և՛ կեցության առավել ընդհանրական փոխաբերություններ, ինչպես ասենք Բերգհոֆ առողջարանը Թոմաս Մանի «Կախարդական լեռը» վեպում, որ նախապատերազմական Եվրոպայի մետաֆորն էր, կամ դղյակը Կաֆկայի նույնանուն վեպում, որ բյուրոկրատիայի հսկայական ապարատի փոխաբերությունն է, թեև սրանցով այդ մետաֆորների բովանդակությունը չի սպառվում, և այնքանով, որքանով դրանք պատկերում են մարդկային կյանքը, դառնում են նաև կեցության փոխաբերությունը:

Գ. Խանջյանի վեպում *իքս* մարդիկ հերոսին ուղեկցում են հիվանդանոց. այսպիսի սկսվածքն, անշուշտ, հիշեցնում է Ֆ. Կաֆկայի «Դատավարության» մուտքը, որտեղ էլ երկու անծանոթ տղամարդ ներխուժում են Յոզեֆ Կ-ի բնակարան կամ կյանք և հայտարարում, որ նա դատապարտված է: Աստիճանաբար կռահում ես՝ այդ ձգձգվող դատավարությունն, ուր կարևոր են դառնում կենցաղային մանրամասները, ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու գոյաբանական դատավարությունը: Ճիշտ այդպես, ինչ-որ մի պահի Գ. Խանջյանի վեպի ընթերցողն է հասկանում, որ Գրիգորը հայտնվել է ոչ սովորական մի հիվանդանոցում, քանզի վեպի երիտասարդ հերոսը բացարձակապես առողջ

է, և այստեղ է, որ ընթերցողը հասկանում է. դա սովորական հիվանդանոց չէ, այլ բարոյական այլասերման, արժեքների անկման, հոգեկան անառողջության համընդհանուր մի կենսոլորտ, ուր ոչ թե հերոսն է հիվանդ, այլ՝ այն հասարակությունը, որ շրջապատել է նրան. առավել քան ակնհայտ է, որ հիվանդանոցը պայմանական համակեցության միկրոմոդել է: Գրիգորը քանիցս փորձում է փախուստի դիմել այդ հիվանդանոցից, բայց նրա բոլոր փորձերը դատապարտված են ձախողման, քանզի անհնար է դուրս գալ հիվանդանոցի տարածքից: Այսպիսի սյուժեն կարելի է ընկալել նաև մարդու գոյաբանական դատապարտվածության կաֆկայական թեմայի մի պրոյեկտում, բայց այստեղ հիվանդանոցի՝ իբրև հասարակական միկրոմոդելի պատմական որոշակիությունը հստակ է, փակ տարածքն ավելի քան թափանցիկ ակնարկ է: Հիվանդանոցը ոչ միայն պայմանական համակեցության միկրոմոդել է, այլև հասարակական որոշակի կացութաձևի՝ Խորհրդային կայսրության փոխաբերություն: Այսպիսով, հիվանդանոցն անհատին դիմազրկող, անհատականությունը ոչնչացնող հասարակարգի մետաֆորն է: Գրիգորին այդ հիվանդանոցում նախ համարակալում են, բթացնում կյանքի նրա ընկալումն ու ոչնչացնում նրա անհատականությունը: Սակայն հիվանդանոցը ոչ միայն Խորհրդային Միության յոթանասուն տարիների, այսինքն՝ մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի գեղարվեստական այլաբանությունն է, այլև իննսունականների, անկախության շրջանի հայկական իրականության, բարքերի, այլասերության, արժեքային չափանիշների անկման, ամենաթողության համընդհանուր մթնոլորտի համապատկերը, իսկ այդ այլասերումը պատկերելու համար գրողը հաճախ հայտնվում էր ժամանակավրեպ քննադատության թիրախում: Բայց այսքանով ևս չի սպառվում հիվանդանոցի մետաֆորի բովանդակությունը: Է. Ֆրոմն իր աշխատություններում քննության է առնում ժամանակակից մարդուն օտարող, ներքնապես անառողջ հասարակության կառուցվածքը, հասարակություն, որը պահանջում է մարդուց լինել այնպիսին, ինչպիսին ինքն է, հասարակություն, ուր մարդն աստիճանաբար սկսում է կորցնել իր դեմքը (այս մոտիվը հատուկ է նաև Գ. Խանջյանի պատմվածքներին, հիշենք «Ճարպոյի կերպարանափոխությունը»), չտարբերվելու համար՝ մարդը ձգտում է նմանվել այն հասարակությանը, ուր տիրում են այլասերումն ու անառողջ մթնոլորտը: Քանի որ շուրջն ամեն ինչ անառողջ է, անառողջ է դիտվում առողջությունը. հոգեկան առողջության որոշման արժեքային չափանիշները հիմնովին տարտղնված են: Այս մասին է «Հիվանդանոցը»: Վեպի հերոսի այլասերումը, անկումը տեղի է ունենում հենց այդ անառողջ հասարակության ազդեցության հետևանքով: Այսպես է, որ իր ժամանակների փոխաբերությունը դառնալուց բացի Գ. Խանջյանի վեպը կարող է ընկալվել իբրև մարդկային կեցության փոխաբերություն ընդհանրապես: Աշխարհը գրողին

պատկերանում է որպես մի հսկայական հիվանդանոց, ուր տիրում են անառողջ մթնոլորտն ու այլասերությունը և որտեղից փախուստ գործել անհնար է: Մարդը դատապարտված է կեցության, հիվանդանոցում նա հայտնվել է հակառակ իր կամքի՝ հետևաբար հիվանդանոցը նաև մարդկային կեցության փոխաբերությունն է ընդհանրապես: Այսպիսով Խանջյանի վեպում հիվանդանոցը և՛ խորհրդային անցյալի, և՛ անկախության ժամանակների, և՛ ընդհանրապես մարդկային համակեցության ու կեցության փոխաբերությունն է: Իսկ մեզ համար վեպի գեղարվեստականության ցուցիչը հենց մետաֆորն է, և որքան բազմանշանակ է այդ մետաֆորը, այնքան արժեքավոր է վեպը: Ինչ վերաբերում է «Հիվանդանոց»-ի «Դատավարության» հետ ունեցած աղերսներին, արդյո՞ք այդ աղերսները չեն ստվերում Խանջյանի վեպը: Չմոռանանք, որ XX դարի շատ վեպեր հանիրավի մեղադրվել են կաֆկայականության մեջ, բայց վերապրել են այդ քննադատությունը, այդ թվում և այնպիսի դարակազմիկ վեպ, ինչպիսին Դինո Բուցցատիի «Թաթարական անապատն» է, Կաֆկայի «Դղյակը» հիշեցնող այս վեպը XX դարի ամենամեծ ընթերցողը՝ Բորխեսը, համարել է բոլոր ժամանակների լավագույն, անմահ ստեղծագործություններից մեկը՝ զետեղելով իր «Անձնական գրադարանում»: Կաֆկայի մեծությունը նրանում էր, որ նա ոչ թե հետին թվով ամփոփեց, այլ կանխորոշեց մի ամբողջ դարաշրջան: «Կաֆկայից բացի ոչ մի գրող գրականության պատմության մեջ չի ստեղծել գրական մի ուղղություն, որ կոչվի նրա անունով: «Կաֆկայականությունը», «կաֆկայական գրականությունը» XX դարի համաշխարհային գրականության գուցեև ամենից տարածված ուղղությունն է, որը տարբեր չափերով արտահայտված է Կաֆկայի հետ նույնիսկ անմիջական կապ չունեցող հեղինակների գործերում (իբրև վիճակ, իրադրություն, կամ պարզապես հղում, ալյուզիա, ռեմինիսցենցիա): Սա ցույց է տալիս, որ թերևս ոչ ոք այնքան խոր և ճշգրիտ չի վերապրել իր դարաշրջանի «հոգևոր վակուումը», ինչպես Կաֆկան, որն իր բացառիկ անկեղծ և ինքնուրույն ընկալումների մեջ, իր ճգնաժամային-իրավիճակային տեսանկյունից տեսել է և վերապրել կյանքն առանց իմաստի, աշխարհն առանց տիրոջ, ժամանակն առանց նպատակի, հետևանքն առանց պատճառի, երբ կյանքի միակ նշանը դառնում է ապրելու ցավը, տառապանքը, երբ մարդը դադարում է գոյություն ունենալ աշխարհում՝ վերածվելով միայն ներքին գիտակցության, ուր նա գտնում է իր միակ հենարանը՝ պաշտպանվելու գիտակցության գծից այն կողմ գտնվող արտաքին, իռացիոնալ, թշնամի և օտար աշխարհից: Ոչ թե Ֆրանց Կաֆկան ինքն է հիվանդ, ինչպես գտնում են շատերը, այլ հիվանդ է աշխարհը կամ իրականությունը, որն արտացոլված է նրա արթուն և զգայուն գիտակցության մեջ, մարդը, որը այդ թշնամի ուժերի հարվածների տակ կորցրել է արժեքների իր համակարգը՝ մնալով մենակ այդ օտար և անհայտ

ուժերի առջև»,- գրում է Հենրիկ Էդոյանը «Ֆրանց Կաֆկան ինքն իր մեջ» էսսեում: Մեկ ուրիշ տեղ. «Կարելի է ասել, որ նրա ստեղծագործական համակարգը XX դարի մի ամբողջական էսխատոլոգիա է, ուր թափանցիկ և ներքուստ շողարձակող պատկերների միջից երևում են դարաշրջանի հետագա կատակլիզմների ուրվագծերը (ֆաշիզմ, կոմունիզմ, մտքի և իմաստի անհետացում, կյանքի ընկալման բթացում, արժեքների այլասերում, դաժանության և կործանման պաշտամունք և այլն)»: Այո՛, Կաֆկան դեռ անցյալ դարի սկզբներին էր կանխատեսել, եթե կարելի է ասել, մարգարեացել XX դարի հսկայական բյուրոկրատական մեխանիզմի ամենակալ բնույթը:

Բուցցատիի վեպը զինվորական կարիերայի համար Թաթարական կոչվող անապատում մեկուսի տեղակայված ամրոց ժամանած երիտասարդ Դրոգոյի կյանքի պատմությունն է: Նրա ամբողջ կյանքի իմաստը հանգում է այդ ամրոցում թաթարների կողմից հարձակման սպասման, կյանքն այդ սպասումից բացի ոչ մի իմաստ և նպատակ չունի, ընդ որում՝ որքան ուշանում է այդ հարձակումը, այնքան անհեթեթ է դառնում թաթարների սպասումը: Բուցցատիի վեպը գրվել է համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ և, կարծես թե, կանխատեսում է պատերազմը, քանզի խորապես համակված է այդ պատերազմի տագնապով, որ կարելի է ընկալել նաև որպես կեցության տագնապ: Բուցցատիի վեպը նաև մարդկային կյանքը խժռող և սպասումն անհեթեթ դարձնող ժամանակի մասին է: Գ. Խանջյանի «Հիվանդանոց»-ը ժամանակին մեղադրվել է կաֆկայականության մեջ, ինչպես մեղադրվել է նաև Բուցցատիի վեպը: Գ. Խանջյանի վեպն, իրոք, անկեղծորեն կաֆկայական է, բայց կաֆկայական է բառիս լավագույն իմաստով, և այն նույնպես պրիտչա է մարդկային հույսերի, սպասումների խորտակման, մարդկային կյանքը խժռող ժամանակի մասին, և դժվար է գտնել մեկ ուրիշ վեպ, որն այսքան այլաբանորեն անուղղակի կերպով առնչություն ունենա անկախության, հետխորհրդային ժամանակաշրջանի հայ իրականության հետ, այդքան տպավորիչ կերպով իր ժամանակաշրջանը փոխակերպի գեղարվեստական գրականության այլաբանության լեզվի, ու թեև այս վեպը ո՛չ մարգարեություն է, ինչպես Կաֆկայի վեպը, ո՛չ կանխատեսում, ինչպես Բուցցատիի վեպը, այլ՝ անցյալի այլաբերում, ժամանակաշրջանի գեղարվեստական ամփոփում, բայց անշուշտ անկախության շրջանի հայ գրականության լավագույն, հանգրվանային վեպերից է, և անշուշտ՝ հայ գրականության լավագույն վեպերից մեկն ընդհանրապես: